

**Տ. ԽԱԺԱԿ ԱՐՁԵՊԻՍԿՈԴՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ  
ԽՈԽՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ  
ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՄԻ ԳԱՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ  
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ**

(7 նոյեմբերի 2004 թ.)

«Ես եմ հովիսն քաջ. հովիսն քաջ զանձն իր  
դնէ ի վերայ ոչխարդաց... Ճայնի իմում լոփցեն,  
և եղիցին մի հօր և մի հովիս»:

(Տովի. Ժ 11, 16)

«Յանուն Նօր և Որդոյ և Շոգոյն Սրբոյ. ամէն»

Շովիանու Ավելարաննեն առնված այս խոսքերը այս առավոր անգամ մը ևս կհնձնն բոլոր հայ Եկեղեցիներու կամարներուն ներքեւ, երբ համայն հայ ժողովուրդը, Հայաստան-յայց Առաքելական Եկեղեցին ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի հայրապետական մաս-նավոր մադթամբով օրինաբանություն կմաքուցանե Ասպուծ՝ ազգիս Վեհափառ Հայրա-պետի զահակալության հինգերորդ փարեհարձին առթիվ: Շովիանու Ավելարանին այս խոսքերը անգամ մը ևս մեր առջև կպարկերավորե Քրիստոսի անձը իբրև հովիս քաջ, որ «զանձն իր դնէ ի վերայ ոչխարդաց»:

Կեհշենք անգամ մը ևս, թե ինչպես Քրիստոս՝ մեր Տերը և մեր Փրկիչը, իբրև քաջ հովիս իր անձը զոհեց, չարչարեց և խաչի ծանր բեռը իր ուսերուն վրա շալկեց մեզ համար, մարդ-կության փրկության համար: Քրիստոս այդ զոհողությունը կապարեց, որովհենք կսիրե մեզ, կսիրե մեզմն ամեն մեկը իբրև իր զավակները: Քրիստոսի օրինակին հեփսելով իր աշակերտները ևս եղան քաջ հովիսներ և անոնք ևս իրենց անձը զոհեցին մարդոց համար և զային աշխարհի զանազան կողմերը՝ փարածելու փրկության վարդապետությունը, առաջ-նորելու մարդոց դեպի Ասրբած, դեպի Երկինք, ուրկե մարդը ծագում առած էր:

Քրիստոսի և առաքելոց օրինակին հեփսելով՝ Նայ Եկեղեցվոն սրբազն Հայրերը և Հայ-րապետները ևս եղան նոյն առաքելության ծառաները և սպասավորները: Մեր ավելի քան հազար յոթ հարյուր փարիներու պարմություն իբրև Նայ Եկեղեցի, լավագույն փաստն է ցոյց փալու համար, թե մեր Եկեղեցին որքան մեծ թիվով ունեցավ Հայրապետներ, քաջ Շովիապետներ, որոնք իրենց անձը զոհեցին Նայոց Հայրենիքի և հայ ժողովուրդի բարօրու-թյան համար:

Այսօր, սիրելիներ, մենք Ասրուծ փառք կմաքուցանենք, որ մեր այդ սքանչելի ավան-դությունը կշարունակվի, երբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին այս օրերուն ունի արժանավոր Շովիապետ մը՝ հանձին Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Հայրապետի Ամենայն Հայոց: Մենք բոլորս հայ ժողովուրդի զավակներ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի կող-գանք, թե Հայրապետը, Շովիապետը Նայ Եկեղեցվոն քաջ է իր զործունեության մեջ: Իր

կյանքին մեջ մենք կզգանք, թե ինչպես Հայոց Հայրապետը կսիրեն իր Հայրենիքը, կսիրեն իր ժողովուրդը ի Հայաստան և ի Սփյուռք աշխարհի և թե ան նվիրված է իր Հայրենիքի և իր ժողովուրդի, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցվո առաքելության շարունակման նվիրական գործին: Վեհափառ Հայրապետի հինգ տարվա գահակալության արդյունքը ցոյց կուտան կորովի և երիտասարդ Հայրապետի մը անխոնչ աշխարհանքը Մայր Աթոռը մեր ժողովուրդի բոլոր դասակարգներուն սիրելի դարձնելու ձգբումը՝ Հայաստանյաց Եկեղեցին և Սուրբ Հջմանակին իր նախակին փառքին վերադարձնելու և նոյնինչ առավել ևս զորացնելու թե՛ Հայրենիքի մեջ և թե՛ ալ ամբողջ Սփյուռքի տարածքին:

Այսօր, այս տասը-դասնինգ րոպեներու ընթացքին կարելի է խոսիլ, ցոյց դալ այն բազմազան գործունեությանց արդյունքը, որ Վեհափառ Հայրապետը անցնող հինգ տարիներու ընթացքին կադարեց, հաջողությամբ պատկեց: Եվ սակայն իշխնը անոնցմանը: Այսպես, այս անցնող վերջին տարիներուն զրեթե հաճախակիորեն մենք ուրախությամբ կլսենք, կարդանք, թե նոր Եկեղեցիներ կօձվին հայրենի հողի վրա, փլատակ դարձած իին Եկեղեցիներ, իին տաճարներ կվերանորոգվին և այդ Եկեղեցիներու, վանքերու, տաճարներու դրանքը կրացվի մեր ժողովուրդի առջն, կրտսեններ, թե քրիստոնեական դաստիարակության մնացարկ կտրվի. ուրախությամբ փեղեկացանք, թե ինչպես անցնող տարիներուն հայրենի կառավարությունը Ամենայն Հայոց Կարողիկոսության հետ համաձայնություն կնքեց, որպեսզի հանրային դարցոցներու մնաց կրոնը, հավաքը դաստիարակվի: Նոր գիրքեր կիրապարակվին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ջանքերով, կրտսեններ բազում հրապարակություններ քրիստոնեական դաստիարակության մարզին ներս և ուրախությամբ ականափես կրլանք, թե Մայր Աթոռը Վեհափառ Հայրապետի գիշավորությամբ կօգտագործե նոր ժամանակակից մորթեցումներ քրիստոնեական դաստիարակությունը ավելի դյուրացնելու, ավելի մարդու դարձնելու մանավանդ մեր երեխաներուն, մեր երիտասարդներուն:

Ուրախությամբ ականափես կըլլանք, թե ինչպես Մայր Աթոռը «Շողակաթ» հեռուստագետի իր ծրագիրներով հավաքը կրարողն, կրարողն Քրիստոսի վարդապետությունը և Հայ Եկեղեցվո սրբությունը և առաքելությունը, նաև ծայնասիյու և կօգտագործվի և նաև կսպասենք այս հատաշիկա օրերուն, ամիսներուն Մայր Աթոռի ինվերների սրանչելի ծրագրի գործածության, որ ահավասիկ ատիթ պիտի ընծայն, որպեսզի աշխարհի վրա ցըրված հայ ժողովուրդի բոլոր գավակներ այդ միջոցավ ևս դաստիարակվին, գիրնան, թե ով են իրենք, հասկնան և ըմբռնեն, թե անոնք բոլորը Հայ Եկեղեցվո հարազար գավակներ են:

Երիտասարդական շարժումը Վեհափառ Հայրապետի ամեննեն կարևոր գործունեություններն մեկը եղած է անցյալեն սկսյալ, երբ ինքը երիտասարդ առաջնորդական փոխանորդ Արարագյան թեմի, իր շուրջը հավաքած էր բազմահարյուր հայ երիտասարդներ: Այսօր ուրախությամբ ականափես կըլլանք Հայրենիքի մնաց մեր երիտասարդ սերունդի առողջ կրթությանը, քրիստոնեական դաստիարակությանը և այդ շաբ հիմնական է, շաբ կարևոր է մեր ապագայի համար իրեն Հայաստան, իրեն հայ ժողովուրդ, իրեն Հայ Եկեղեցի, որովհետք հայությունը այսօր կարիքը ունի ազնիվ, բարի, գիշակից հայորդիներու, որոնք խնդի մաքրությամբ պիտի կարողանան մեր ժողովուրդը և մեր Հայրենիքը առաջնորդեն:

Անավասիկ Հայ Եկեղեցվո Մայր Աթոռի շուրջ հավաքված հայրենի մեր երիտասարդությունը մեր սրբերը հոյսով և հավատքով կպարփակեն և մենք կիավագրանք և կիուսանք, թե Հայրենիքի ապագան փայլուն է մեր երիտասարդությամբ, երիտասարդություն, որոնք Հայրապետի շուրջ հավաքված են, Հայ Եկեղեցվո շուրջ հավաքված են և զիտեն, թե իրենք կպարփականին անցյալին և սակայն այսօրվա իրականությամբ խանդավառված պարրասպ վաղվա դժվարություններուն դիմագրավել: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Վեհափառ Հայրապետի ջանքերով այս վերջին փարիններուն առավել կապեր հասդարկած է, կապեր, որոնք անցյալին թերևս այսքան ամուր չէին Հայ Եկեղեցվո բոլոր թեմերու հետ Հայաստանի և մասնավորաբար Սկիուտիքի դարաձին:

Վեհափառ Հայրապետը իր հովկապելովական այցելություններու ընթացքին զանազան երկիրներ, զանազան թեմեր կիսանդավառն մեր ժողովուրդը Հայ Եկեղեցվո սիրով, Հայրենիքի սիրով և այդպիսով կապը Մայր Աթոռի, կապը Հայրենիքի և արքասահմանի Հայ Եկեղեցվո զանազան թեմերուն առավել ևս կզորանա, և այդ զորացումը Հայ Եկեղեցվո, հայ ժողովուրդի զորացումն է:

Նոգևոր դպրոցներու հառաջացումը Վեհափառ Հայրապետի կարևորագույն առաքելություններն մեկն է: Այս անցնող մի քանի օրերուն Մայր Աթոռի Գևորգյան Ճեմարանի 130-րդ դարեղարձն է, որ կտոնախմբենք: Այդ առիթով անզամ մը ևս կանդրադառնանք, թե անցնող 130 փարիններու ընթացքին Մայր Աթոռի Գևորգյան Ճեմարանը ինչպիսի մեծ ծառայություն մաքրութած է Հայրենիքին և հայ ժողովուրդին, և ուրախ ենք, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալությամբ Գևորգյան Ճեմարանը նոր շրջան մը սկսած է, վերանորոգման, վերածաղկումի շրջան մը և Գևորգյան Ճեմարանի կողքին մենք կդիմունք ծաղկումը Սևանի Դպրանոցին և այլ հոգևոր-կրթական հասդարկություններու ևս, որոնք հառաջիկա դարձներուն պիտի զորանան և այդ ճեմարաններու մեջ երիտասարդներ, ժառանգավորներ պիտի սորվին իրենց առաքելությունը և պիտի դառնան քաջ հովիվներ: Շովիվներ, որոնք պիտի կարողանան այսօրվա մեր ժողովուրդի հոգևոր կարիքներուն հոգալ թե՝ Հայաստանին մեջ և թե՛ ալ արքասահմանի դարաձին:

Մենք արքասահմանի մեջ հոգեկան մեծ ուրախությամբ, մեծ խանդավառությամբ կկարդանք և կլսենք, թե Մայր Աթոռի մեջ գրեթե ամեն քառասուն օր անգամ մը ճենադրություն փնտի կունենա: Վերջերս Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցվո մեջ փասնինը նոր հոգևորականներու ճենադրությունը արքասահմանի մեջ մեծ խանդավառություն սկիելծնեց և կիսեննենք, թե Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին վերելք կապրի, նահապեակ դարձած մեր հոգևորականներու վել այսօր կծաղկին նոր հոգևորականներ՝ մեզ հիշեցնելով Ավելարանի խոսքը, թե երբ ցորենին հագիկը գետին իյնա և մետնի, անոր վեղ նորը կծիլ, և այսպես կիսեննենք, թե նահապեակած ավելի քան ինչնզ հազար հայ հոգևորականներու այսօր կիաջորդե նոր հոգևորականներու սերունդ մը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ, իր իմաստուն հայրապետությամբ:

Սուրբ Էջմիածինը իր գահակալով այսօր լրիվ սփառնած է իր դերը՝ որպես մայր Եկեղեցյաց հայոց և իր նվիրապետական բարձրագույն դիրքեն կիավարք իր ծննդական պարփականությունները մեր համայն քրիստոնյա ժողովուրդի համար: Վեհափառ Հայրապետի հնգամյա գահակալության ամենափայլուն գոհարներեն կիանդիսանա Սուրբ Էջմիածին

դարավոր վանքը: Ուրախությամբ կրթանենք, թե ինչպիսի փոփոխություններ կկապարպին մեր Մայր Տաճարի, Հայոց Մայր Եկեղեցվո շորջ: Վրդեն Մայր Վթոռոին վերադարձված են և կվերադարձվին վանքապատկան հողերը, կալվածները և այդ կալվածներու վրա կկանգնին նոր շենքեր, շենքեր, որոնք ոչ թե միայն շենք և շինարարություն պիտի մնան, այլև շենքեր, որոնք պիտի նպաստեն Վեհափառ Հայրապետի երազներու իրականացման: Մեր ժողովուրդը դարեր շարունակ իր Եկեղեցվո ձայնը լսեց, իր Հայրապետին ձայնը լսեց և այդ ձայնին անսարք մեր ժողովուրդը միշտ միասնական մնաց, կարողացավ պարզության դժվարություններուն թևակիրնել: Սիրելիներ, այսօր այ մենք բոլորս՝ հոգևորականներ և աշխարհականներ, իշխանավորներ և կամ գյուղացիներ, պարտավոր ենք Հայ Եկեղեցվո ձայնը լսելու, Հայոց Հայրապետի ձայնը լսելու, որովհետք այդ ձայնն է, որ մեզ պիտի միացն, այդ ձայնն է, որ մեզ պիտի զորացն, այդ ձայնին անսարք մեր բոլորին պիտի կարողանա դեպի հառաջ մղել: Գիտենք, թե այսօր ձայները շար են. արևմուտքեն ձայներ կուգան, արևելքեն ձայներ կուգան, հյուսիսեն ձայներ կուգան, հարավեն ձայներ կուգան: Թերևս այդ ձայները լավ ձայներ են, բայց և պիտի գիրակցինք, թե այդ ձայները մեր ձայնը չեն, կիարգենք այդ ձայներուն, բայց պետք է գիրակցինք, թե մենք իրքն ժողովուրդ, իրքն Եկեղեցի ունինք մեր ձայնը:

Այդ ձայնը 1700 տարիներու ձայնն է մեր ժողովուրդին, այդ ձայնը լսեցին Վարդանանք և այդ ձայնին անսարք անոնք պարախանեցին, թե մեզի մեր հավաքքեն, մեր Եկեղեցինեն, մեր Ավելարամենն ոչ մեկ ուժ կրնա բաժնել: Այդ ձայնը լսեցին 1915-ի մեր նահապակները: Անոնք նահապակվեցան և սակայն անոնք հավերժական են, կիավարանք, որ անոնք երկնքի արքայության արժանի դարձած են այսօր: Եթե ուրիշ ձայնի անսարին, թերևս կրնային ֆիզիկապես բարեկեցիկ կյանք ունենա, բայց այսօր անոնք ևս գերեզմաններու մեջ պիտի կորսվեին և սակայն մեր նահապակները կմնան հավերժական, որովհետք հայու ձայնին, Հայ Եկեղեցվո ձայնին, Հայոց Հայրապետի ձայնին անսարին:

Սիրելիներ, այսօր Վեհափառ Հայրապետի զահակալության հինգերորդ դարվան առիթով եկեք, հոգևորականներ և աշխարհականներ, ոխտենք կամ ավելի ևս մեր ոխտը վերանորոգենք, որ այդ ձայնին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձայնին հավատարիմ պիտի մնանք: Այդ ձայնը Քրիստոնի ձայնն է, այդ ձայնը այս սուրբ Եկեղեցին, Սուրբ Վթոռոին ձայնն է, այդ ձայնը մեր պարզության Հայրերուն և Հայրապետներուն ձայնն է: Նոգևորականաց դասով մենք այսօր, սիրելի Վեհափառ Հայրապետ, կանորադատնանք, որ երբեմն մարդկային մեր վկարության մեջ չենք լսեր ծեր ձայնը, երբեմն այդ ձայնին հավաքարիմ չենք, և, սակայն, Վեհափառ Տեր, արքունեցեք, որ մենք՝ հոգևորականներս հայդնենք մեր երախտագիրությունը, որ Դուք, սիրող և գուրգուրացող Հայրապետ Հայոց, կղիւթեք մեզ իրքն ծեր զավակները, ինչպես որ Քրիստոս Պետրոս առաքյալին դիմեց, երբ Պետրոս առաքյալը երեք անգամ ուրացավ, Քրիստոս գիրեր, թե Պետրոս առաքյալ ունի կարողությունը Եկեղեցին զորացնելու, Եկեղեցվո առաքելությունը շարունակելու:

Մենք երախտապարդ ենք, որ Դուք ալ մեր Հայոց, մեր հոգևոր Հայր, այդ նույն մոփեցումով մեզ կքաջալերեք, մեզ կներեք և մեզ կիրախուսեք, որպեսզի մենք կարողանանք միշտ անդրադարձ ունենալ, կարողանանք ծեր ձայնը լսել, որովհետք ծեր ձայնին լսելով մենք պիտի զորանանք, ծեր ձայնին լսելով Հայ Եկեղեցին պիտի զորանա, ծեր ձայնին լս-

լով այս Աթոռը՝ Մայր Աթոռը պիտի զորանա: Եվ, Վեհափառ Տեր, մենք այսօր անգամ մը ևս կանդրադառնանք, որ ձեր ծայնին անսալով, ձեր ծայնը լսելով մենք բոլորս պիտի կարողանանք սրեղծել, իրազործել միասնականությունը և կանդրադառնանք, որ այդ միասնականության հիմնական կերպ մեր հոգևոր միասնականությունն է: Եթե կողենք մնալ և շարունակել իրեն հայեր, հարազար զավակներ Հայ Եկեղեցվո, պարտավոր ենք այդ ծայնին անսալու:

Վեհափառ Հայրապետ, Ձեր զահակալության հիմքերորդ փարեղարձին առիթով մենք բոլորս անգամ մը ևս մեր հավաքարմությունը կներակայացնենք Ձեզ և Ձեր միջոցավ այս Սուրբ Աթոռին՝ Սուրբ Էջմիածնա Մայր Աթոռին, և կաղոթենք, որ Աստված Ձեզ զորավոր պահե, ապահով պահե, Աստված ձեզ երկար առողջ փարիներ շնորհե, որպեսզի ձեր հովանուկ և մեր բոլորի մասնակցությամբ հոգևորականներ և աշխարհականներ, Ձեր երազները հանուն Հայրենիքի, հանուն հայ ժողովուրդի ի Հայաստան և ի Սվյուտս աշխարհի, հանուն մասնավորաբար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո իրազործվի: Բոլոր հոգևորականց դասու, աշխարհական մարմիններու ներկայությամբ այսպես, Վեհափառ Տեր, մեր որդիական սերը և շնորհակալությունները կհայդնենք Ձեզի:

Աստված անսասան պահե այս Աթոռը, Աստված երկար առողջ փարիներ շնորհե ազգիս Վեհափառ Հայրապետին և մենք բոլորս որպես հայ ժողովուրդի զավակներ հետևինք քաջ Շովկապետին, լսենք իր ծայնը, անսանք այդ ծայնին և այդ ծայնին անսալով կարողանանք սրեղծել ավելիքարանական այն ճշմարգությունը, թե մենք բոլորս ալ նույն հոդի զավակներն ենք, նույն Հայրապետի զավակներն ենք: Այս զիրակցությամբ այսօր, սիրելիներ, օրինենք և բարեբաննենք անոնք Սուրբ Երրորդության. այժմ և միշտ և հավիպյանս հավիպենից. ամեն: